

ԿՈՄԻՏԱՍ ՎԱՐՂԱՊԵՏԸ ԵՎ ՖՐԱՆՍԻԱՆ

Ֆրանսիացի երաժշտագետ և երգեհոնահար Ա. Լավինյակի աշակերտ, Սկոզո Կաառոմի դասախոս Ամեդե Գասստեն մի առիթով ասել է «...Այն օրից, երբ եայր Կոմիտասը շիման մեջ մասավ ֆրանսիական երաժշտության հետ, ավելի հառակորեն գիտակցեց, թե ինչ էր ուլում իրականացնել, և նրա եանճարը դրսևորվեց ավելի լիարեն: Արդյո՞ք ուրեան, մի որոշ հեռուվոր աղերս կա ֆրանսիական և եայկական արվեսաագործական մտքերի միջև...»

Կոմիտասը առաջին անգամ կարճատև այցելեց Ֆրանսիա 1901 թվի եուլիսին, որի ժամանակ նա եանդիպեց և իր ծրագրերի հետ ծանոթացրեց ֆրանսիացի նշանավոր երաժիշտներ Մեն-Մանսին, Շարլ Պորսին, Դյուվալին, Պ. Օրրիին և լսեց նրանց քաջալերող հիացական խրախոսանքները:՝ Սրան եաջորդեցին ռազմաթիվ այցերը այն ժամանակվա մասվորական կենտրոն՝ Փարիզ (1906, 1907, 1911, 1914 թ.թ.): Կոմիտաս-Ֆրանսիա կասսը վտքրիշատե ռացաեայաերու եամար այն դիտարկեեց մի քանի կողմից: Առաջին հերթին՝ հ՞նչ նշանակություն ունեցան այս այցելությունները Կոմիտասի գործունեության եամար:

Սարգարիտ Բաբայանը «Հաշ Կոմիտաս Վարդասլեսի շուրջը» (75-ամյակի առթիվ) ակնարկում² գրում է. «...Թիֆլիզի այդ ապավորություններից յետոյ քո Փարիզ գալը 1906 թռականին, քո առաջին այցելուդիներ՝ մեր երաժշտական ժամանցները և կամաց-կամաց ազատուելը Բերլինի չոր դասատուութիւնից: Այն ըուր ներշնչումները, որ Փարիզի սքանչելի երաժշտական մթնոլորտը, այնսլիսի մեծ երաժիշաները, ինչպես Դեբյուսի, Ֆորե, Ռավել, Ռոսել, քրոջս ամուսինը մեծ երաժշտագետ գիտնական Լուի Լալուան և քույրս, սագաեցին երաժշտական եոզիդ գերմանական դալրոցական կաշկանդումից»: 1906-07 թվերի՝ Փարիզ կասարած այցը մեծ նշանակություն ունեցավ նրա կյանքում, գեղագիտական հայացքների, մտածողության ձևուկուման, ինչպես և հայ երաժշտական մշակույթի գարգացման եամար: Ըստ Շարլ Կյուկլենի՝ «Փարիզի առաջին այցելումից է սկիզը առնում նրա ստեղծագործական ձեռագրի որոշ ռարեշրջումը, այն դասնում է ավելի եթերային, ավելի լուսավոր, և այդ ժամանակից ի մեր նա ի վիճակի է եղել այնքան եարագատորեն արասեայաել խոր հույզերը ժողովրդական երգերի, որոնց նա ավել է պուլիֆոնիկ ձև»: Փարիզի երաժշտական աշխարհը այդ ժամանակ գանվում էր Կլոդ Դեբյուսիի ազդեցության աակ, և նոր ազաս եոսանքներով ոգևորված երաժշտական մթնոլորտը չէր կարող չազդել՝ նուև գգայուն երաժշտի սքանչելի էութան վրա: «...Ինչպես ակնաթկել ևմ, շարունակում ևնք կարողալ Կյուկլենի եողվածում, - ֆրանսիական դալրոցի ազդեցությունը (անկասկած՝ Կլոդ Դեբյուսիի, Մորիս Ռավելի և գուցե նաև Գարրիել Ֆորեի) իր եեաքն է թողել նրա գթելակեթալի վրա: Չմոտանանք նուև՝ լադային մթնոլորար, ուգում եմ ասել՝ եունական և միջնադարյան լադերիը, որ այնքան ընորոշ է այսօրվա Ֆրանսիայի եամար, ճշգրատրեն միևնույն է, ընչ որ եայկական երգերից շատերիը, և որ Հասյր Կոմիտասի կողմից իրականացված ըարսլին պուլիֆոնիան եամանցում է մերիին նույնքան, որքան ոգում այն մեղեղիների, որ մշակել է նու ռազմաձայնորեն):

Փարիզում նրա սաեղծագործությունների, աշխատությունների և կատարողական աաղանդի բարձր գնաեուաականը ոչ միայն եայրենուկիցների, այլև ֆրանսիացի անվունի երաժիշտների կողմից մեծ խթուն եանդիսացավ եեաագա գործունեության, պրպատմների, որոնումների եամար: Պ. Օրրիի առաջարկութայմը և ծախսերով մինչև 1906 թ. նախուսեսվում էր ապագրել 100 կրգերի հայերեն ընագրերը (ֆրանսերեն թարգմանութայմը) իրենց մեղեղիներով և Կամիտասի ծավալուն քննական ոտումնասիրութայմը, որպևս գիական երասարակություն: Կասարվեցին նախապարասուական աշխասանքներ, սակայն նյութական անեամաձայնության պասճառով Կոմիտասը երաժարվեց առաջարկից, և այն մնաց անտիպ: Կարճ ժամանակ անց “Le Mercure musical” ամսագրի (սմբագիր Լ. Լալուա) և «Անահիա» եանդեսի էջերում երասարակվեցին «Հայ գեղջուկ երաժշտություն» ծավալուն եողված-ոտումնասիրությունը՝ ռազմաթիվ նոտային օրինակներով. «Չորս հայկական մեղեղիներ» (“Quatre melodies armeniennes”, 1906, 15 novembre), «Ժողովրդական երգի

1. Կոմիտաս վարդապետը, Անահիա, 1901թ., 6-7:

2. Մ. Բաբայանի արխիվ, 224 նյութ:

3. Հավանարար, ի նկասի է առնվում առաջին երկարատև այցելությունը:

4. Ը. Կուկլեն, Հայր Կոմիտասի մասին, Կոմիտասական, 2, էջ 268:

ծառայումը և ազգայնությունը» (1907թվ. «Անահիտ», 3-4-5) և այլ հոդվածները:

1906 թ. լույս տեսավ «Հայ քնար» 12 հայ ժողովրդական երգերի մշակումների ժողովածու (6 երգ խմբի և 6 երգ ձայնի ու դաշնամուրային նվագակցության համար): Դժբախտարար Կոմիտասը չունեցավ հայ եսթրադայի և եկեղեցու աջակցությունը իր աշխատությունները ապագրելու գործում: Իր հուշերում Մանուկ Արեղյանը գրում է. «1905 թ. նա գնաց Գերմանիա և ապա Պարիզ այն մեծ եռյուսով, թե այնտեղ կկարարանա երաժշտական իր եղանակները: Բայց «Հայ քնար» անվան տակ միայն մի տասնյակ երգ երաժարակելուց հետո վերադարձավ Էջմիածին, և երբ նրան հարցրի, թե ինչու այդքան սակավաթիվ երգեր նա երաժարակեց, Կոմիտասը սկսեց կծու խոսքեր ասել և՛ արևելյան, և՛ արևմտյան հայ հարուստների հասցեին»⁵:

1919 թ. հետո Կոմիտասի աշխատությունները պահպանելու և տպագրելու գործում անդիդիարիների աշխատանք կատարեց Փարիզի Կոմիտասյան Հանձնաժողովը: Փարզում էր, որ ըսչ որ չափով պոստպոստվեցին կոմիտասյան ձեռագրերը և հետագայում (1946, 1952, 1955 թ.թ.) փոխադրվեցին Երևան, Չարենցի անվան Գրականության և արվեստի թանգարան, Կոմիտասյան արխիվ: Հանձնաժողովը, հանձնա գործում անդամներ, Կոմիտասի մտերիմ ընկերակամներ Երզնուի Մ. Բարսեղյանի և Ս. Չոպանյանի, 1916-1937 թ.թ. երաժարակեց «Հայ ժողովրդական երաժշտություն» երգերի 4 (1925) և պուրերի 1 աեսեր (1928), 1938 թվականին՝ «Հայ գեղջուկ երաժշտություն» ղիրքը, «Հայոց պատարգր» 1933-ին և այլն:

Սեծ էր նաև Կոմիտասի նշանակությունը ֆրանսիացի երաժիշտների համար: Պ. Օրբին 1901 թ. Էջմիածին կատարած այցից ստացած սուլավարություններում գրում է. «Էջմիածնում մեր անցկացրած օրերին Կոմիտասը շատ օգտակար եղավ մեզ, շատ եռուսխարված կլինեի, եթե նրան չեանդիպեի... ոչ ոք նրա պես չի երգում ժողովրդական մեղեդիները, որ նա հավաքել է հատուկ շրջագայությունների ընթացքում»: Օրբինի գրքի և հոդվածների շնորհիվ ֆրանսիացիները 1902-03 թ.թ., դեռ չլսած Կոմիտասին, արդեն իսկ պատկերացում կազմեցին հայ գեղջուկ երաժշտության մասին: «Ես Կոմիտասի եես եանախ աշխատում էի նրա ընկերակամում, շարունակության մեջ գրում է Օրբին, - նա մեզ ընդունում էր էյուրասենյակում, և անուշահամ թեյ ըմպելով՝ միասին ուտումնասիրում էինք հայ երաժշտության տեսությունը: Կոմիտասը իր սրտը արտահայտում էր մերը հայերեն, մեր գերմաներեն, մերք էլ ֆրանսերեն, նա այսպեսով համարյա վառաե էք, որ ես հասկանում եմ իրեն: Երկարատև և եեսաքրքրական գրույցների ընթացքում նա ինձ համարյա յուտարանեց բոլոր դժվարին հարցերը: Այն, ինչ ընդունումը լավ չէր արահայտում, երգն ավելի լավ էր հասկացնում, և Կոմիտասը սիրով էր մի կայմ թողնում դազմախոտն դացատթությունները՝ իր միտքը որոշակի դարձնելով երգած օրինակներով»⁶:

Հայ երաժշտությունը ֆրանսիացիները ճանաչեցին Կոմիտասով: Ինչպես ժամանակին արահայտվել է երաժշտագետ Կոլկին. «...Սեր (ֆրանսիացիների-Ն. Ե.) գիտակցության մեջ Հայր Կոմիտասը և հայկական երաժշտությունը գուգորդվում են միշտ»: Կոմիտասի ներկայությունը և ծավալած դիտական, տեղեղագործական, կատարողական գործունեությունը Փարիզում մեծ ազդեցություն գործեց և անդի հայ համայնքի վրա: Դա արահայտվեց ոչ միայն ազգային երաժշտական մթնոլորտի սանդղման, այլև «ազգայինը եամամարդկայինի մակարդակի բորձրացնելու, միջազգայինի եես հաթարերության մեջ դնելու, փոխներթափանցման չափանիշների որոմման մեջ»⁷: Մաքուր ազգային երաժշտությունը, ինի դա գեղջկական, թե եկեղեցական, Կոմիտասի մեկնաթանմամբ նոր աշխարհ էր ոչ միայն ֆրանսիացիների, այլև անդի հայերի համար. «...Ես Փարիզի եկեղեցայն մեջ անսեր եմ նոյն իսկ Մանթաշեանի, Համբարձում Սելիքեանի պես դրական մութով ու եուժկու կազմով մարդիկ, ոք զայն լսելու ատեն կուլային...», - գրում է Չոպանյանը «Կոմիտաս վարդուսպեար և հայ երաժշտությունը» ծալարում եոդվածում⁸: Այսանդ կազմակերպված յուրաքանչյուր եամերգ Կոմիտասի մասնակցությամբ ումեք ազգային ինքնագիտակցման և զնահաման արժեք, լակ հասկապես սվյուտքի եամար այն սասնում է և զոյապահպանական նշանակություն:

Կոմիտասի առաջին ելույթը Փարիզում, որանդ նտ գանվում էր Չոպանյանի երավերով,

5. Ի. Յոյան, Կոմիտաս, Երևան, 1960, էջ 28:

6. Խ. Սամվելյան, Կոմիտասի կյանքի և գործունեության եամանոտ տարեգրություն, Սովետական արվեստ, 1970, 2:

7. Յ. Բրոսյան, Սփյուտքահայ երաժշտական մշակույթը, էջ 273:

8. Անահիտ, 1931, էջ 112:

կայացավ 1906 թվականի դեկտեմբերի մեկին:

Մինչ այդ Չոպանյանը ծրագրել էր կազմակերպել հայ երաժշտությանը նվիրված երեկոներ, որի մասին մտորում էր դեռևս 1903 թվականից և կատարվելիք երգերի ընտրության համար խորհրդակցում Կոմիտասի հետ: 1903 թ. Կոմիտասը Չոպանյանին հասցեագրած նամակում պատվիրամ է գոշուխյանը մոտենալ Բոլաջյանի հավաքած ժողովրդական երգերին. «Մեր թե՛ եկեղեցական և թե՛ ժողովրդական երգերը դեռ նոր են ելնում եվրոպական բեմերի վրա, դեռ նոր ենք ծանոթացնում նոցա մեր զգացմունքի՝ վարքի-բարքի ճշգրիտ պատկեր տվող ազգային երգերին, ուստի շատ զգույշ պիտի լինել մի այնպիսի փախիտկ խնդիր շոշափելուց»⁹:

1906 թ. մարտի մեկին Փարիզի Գեղարվեստի իրադրոսի սրահում մեծ խանդավառությամբ անցավ կովհասյան և ռուս ժողովուրդների երաժշտության եամերգը: Սա մինչ այդ Վաշինգտոնի Պարա սրահում կայացած եամերգի կրկնությունն էր, որ կազմակերպվեց Ռոմեն Ռոլանի խնդրանքով: Այդ եամերգի մասին «Անահիտ» եամեկնում (1906 թ. մարտ-ապրիլ-մայիս, էջ 90) Չոպանյանը «Հայ երաժշտութիւն ի Փարիզ» անդեկատովական եողվածում գրում է, որ հայկական խմբերգերը դեկավարում էր Պ. Սուդունյանը, և «երգում եայլական խմբերգերն էին» «Լեփո լե, լե» (պարերգ Կարա-Սուրբաջի ներդաշնակմամբ), «Սարեն կազայ ձիաուր», «Հասլրպան» (Պ. Միրզախանցի (Գրիգոր Սյունու) ներդաշնակմամբ), «Ո՛վ հայոց Ասաուած» (հեղ. Եհմայանի) և «Կիճկայա» (ժող. եովուերգ)»:

«Պ. Սուդունեան, փայլուն ապագայ իտտացող երիտասարդ բեմեր մը՝ աշակերտ օր. Մ. Բարայանի, մեներգեց զմայլելի կերպով «Աըքսի արասուըը»: Այս եամերգին Կոմիտասը չի մասնակցել: Դրանում կարելի է համոզվել կարդալով նաև “Le Mercur Musical” ամսագրի մեջ Ռ. Ռոլանի գրած եողիըը՝ նվիրված այդ երեկույրին. «Փարիզի Կովկասեան Ընկերութիւնը...մարտի մեկի եինգշարթի իրիկունը նուագահանդես մը տաու «Ընկերական գիտութեանց բարձր դպրուցին» մեջ: Հայկական գեղեցիկ խմբերգեր երգուեցան, խորունկ ու երագուն դեկավարութամր Պ. Սուդունեանի, որ յետոյ մեներգեց եիանալի երայրքով ու տաղանդով, եղերական եղերեղ մը՝ «Աըքսի արասուըը»¹⁰»:

Մինչեւ 1986 թ. Ֆրանսիայում երատարակված «Ար. Չոպանյանը և արմենոֆիլների շարժումը Ֆրանսիայում» գրքի եեղինակ Էդմոնդ Կայաջյանը գրքի 18-րդ գլխում՝ վերնագրված «Ռ. Ռոլանը, Կոմիտասը և հայկական երաժշտությունը», վարկած է եայտնում, որ եհարավոր է այս եամերգին մասնակցել է և Կոմիտասը, որպես եիմնադրութ մեջերեղով Սոֆյա Բետտոլինի Գեղարվեստ-Գեղագիմ հասցեագրված Ռոլանի նամակը. «Երիտասարդ եայը, երեսին ծաղիկ եիվանդութամն եետեր, բայց գեղեցիկ պատանի՝ կայտաու աչքերով և եոյակապ ձայնով: Եկել է Փարիզ մի քանի շարթ աուաօ: Ոչինչ չգիտեր ֆրանսերեն և եամար, ա ընդեաներապես երաժշտութամն չգիտեր, բայց նա այսօը արդեհ դեկավարում է երգչայտումը, եոյր է ունեում մեհաեամարեերով, յոսում և գըում է ֆրանսերեն, այս ամեհն տեելով եոյակապ ձևով: Հազվայիս է ինձ հաջողվել լսել այդպիսի գեղեցիկ, այդպիսի բնական ձայն»¹² (էջ 140): Ըստ եոթյան Ռոլանն ույս կարծիքը հայտնել է Սուդունյանի մասին, որին Էդմոնդ Կայաջյանը ընդեհերապես գըքում չի եիշատակում: Այս բյուրիմացաթյունը աուկա է նաև Ցիցիլյա Բրուտյանի «Սիլյոտըհայ երաժշտական մշակույրը» գըքում, որաեղ եեղինակը, մեջերեղով մի եասված Ռոլանի նամակից (էջ 272), նախօրը նշում է, որ «երանում (նամակամ - Ն. Ե.) մեղ համար բացաղիկ արժեք ունեցող մի երաղություն է պարզվում, նոր ույս սիտելով Կոմիտասի սանդձագործութամն եամամարդկային նշանակութամն վըա»: Սակայն դա բնավ այդպես չէ, քանզի Ռոլանի նամակում Կոմիտասը չի եիշատակվում:

Ռոլանի նամակում շարունակում ենք վարդալ. «...Այդ ինչ երաշալի երաժշտություն է: Այդ ժողովուրդները (ի նկատի ունի ռուս, պարսիկ, վրացի, հայ-Ն. Ե.) երաժշտական տեսակետից ինչ-որ այլ կերպ են օժտված, քան մենք, և ես եամոզված եմ, որ եվրոսրական արվեստը վաղ թե ուշ անպայման կըրի այդ արլիստի ազդեցությունը, որին ինչպես եամրավարեերի, Ասիան աուաջ է ուրարկել, որպեսզի եեաու էլ ինքը ներկայամա մեզ: Այդ արվեստը արդեհ սկսում է

9. Պատմարանասիրական եամեկն, 1958, 1, էջ 247, (Սովետական արվեստ, 1969, 12):
10. Անահիտ, 1906, 3-4-5, էջ 91:
11. Սուդունյանին բարձր է գնահատել նաև Կոմիտասը: 1907 թ. Ա. Չոպանյանին հասցեագրված նամակում նա գըքում է. «Արաի կսկիծով եայտնում եմ Փարիզի կոմսերվատորիայի ուսանող Սուդունյանի մանր»:
12. Նամակը տպագրվել է նաև ուսերեն Иностранная литература անագրում. Москва, 1963, 3, стр. 223.

ուզեցնել մեր երաժիշտներին»¹³։ Բնավ չցանկանալով նսեմացնել Կարա-Մուրզայի և Եկմալյանի խմբերգերի զեղարվեստական արժեքը, կարելի է ենթադրել, թե ինչ զմեռատական կարա Ռուլանը Կոմիտասի խմբերգերին, եթե ներկա լիներ դեկամերի մեկի եամերգին։

Այն կայացավ Salle des Agriculteurs-ում Փարիզի Հայկական Միության նախածեղծությամբ և Կոմիտասի աջակցությամբ։ Համերգին նախորդել էր ծավալուն նախապարատական աշխատանք։ Կոմիտասը Փարիզում էր 1906 թ. հոկտեմբերից և մտանակցում էր հայկական եկեղեցում նշվող ստեղծումներին։ Միաժամանակ նա նախապարատասեց դեկամերի մեկին կատարվելիք իր խմբերգերի¹⁴ նուտաներն ու լատինատառ հայերեն տեքստերը, որոնք տպագրվեցին «Շեմրո և ընկերություն» երատարակչությունում։ Իր շուրջը համախմբելով հայ և ֆրանսիացի երգիչներին, կազմեց 30 եռուց բաղկացած երգչախումբ։ «Օտարներին շատ տեղ չեմ ուզում ուսլ, - գրում է Կոմիտասը Չուպանյանին, - որպեսզի զուտ հայկական ուժեր երևան»։ Հայկական Միության միջոցներով Ե. Դեմեի երաժշտական գործակալության երատարակչությունը «Concert de musique armenienne populaire liturgique» վերնագրով լույս է ընծայում համերգի ութէջանոց ֆրանսերեն ծրագիրը¹⁵։ Հնչեցին բազմաթիվ ժողովրդական երգեր կոմիտասյան ներդաշնակմամբ. «սակայն եղանակին ինքնությունը միշտ անկեղծ կը մնար»¹⁶։ Համերգի մասնակիցներն էին Մ. Բարսյանը, Շ. Բարսյանը, Փարիզի կոմսերվատորիայի ռասալոգներ Սողոմոնյանը, Ա. Շահմուրադյանը։ Երգեցիկ խմբում բացի հայերից մասնակցում էին Փարիզի Colonne և Latoucheux երգչախմբերի անդամները։ Գազաթնակեամ էր Կոմիտաս լիսրոպետի ելույթը։ «Ինքն իսկ երգեց և ինչպես ինքը միայն զիտե երգել Տիրամայրը և Համիկը»¹⁷։ Համերգին ներկա էին օպերայի տնօրեն Կայեարը, Բուրգո Դյուբուայրեն, Դյուբուայրեն (կոմսերվատորիայի դուստրիս), Լ. Լալուան, Պոլ Կիոն, ռանաատեղծ Սորիս Պուշարը և այլք։ Այս ծավալով բավական մեծ համերգը պատմական երևույթ էր հայ մշակույթի համար, ուր Կոմիտասը առաջին անգամ իր «բազմալսր տաքսնդին ամբողջ մեծությամբ ու ընդարձակությամբ հայտնուցավ աշխարհին»¹⁸։ Այն արժանացավ Փարիզի, Բրյուսելի և եվրոպական այլ քաղաքների երաժշտական թերթերի՝ խանդավառ ներողներով լի գնահատականին. «Gade Musical»-ում (Բրյուսել, 1906թ. դեկտեմբեր) կարդում ենք. «...Հայկական նուագահանդեսին մեջ Կոմիտաս վարդապետ ինքը զինքը յայանեց իր թանկագին ծառայող դարի մը, որ այդպիսի անձնախթութեան մը արժանի էր. խորագրեցիկ է զեղեցկութիւնը այդ բոլոր հայկական մելոտիներուն, որ իր շնորհիվ, արուեստագետներու «րեփերթուար»-ին մեջ կը մանեն ճոխացներով հանդիսձ Արևելի ֆուլթրի մասին մեր ծանօթութիւնը»։

Մեծարժեք է Լ. Լալուայի եռվածը՝ նվիրված նվագահանդեսին. «Կոմիտաս, որուն կը պատկանի պատիւը այս եղանակները հաւաքած եւ անոնց զեղեցկություններն առաջին անգամ ըզգոցած ըլլալու, յայանուցաւ նաեւ եմարամիա ու վափուկ նուագայարդար մը, որովհետեւ այդ եղանակներն շատերուն միացուցած էր վաշնակի կամ խմբի համար գրուած բնկերակցում մը, ուր ազգային «թօնալիթե»-ին ու գոյնին ամենաճիշտ և ամենամուրբ զգայում մը երեսան կուգար»։

Կոմիտասի աղանդի գնահատական էր և հաջորդ ելույթի համար երավերը։ 1907 թվի եունվարի 13-ին «Արվեստի փայտի» վարչության խնդրանքով Կոմիտասը դասախոսությամբ հանդես եկավ «Rue de la Sorbonne»-ի սրահում։ Այն նվիրված էր հայ երաժշտությանը. ժողովրդական երգերի սանդղումը, օտար երաժշտության ազդեցության բացահայտումը թե՛ եկեղեցական, թե՛ աշուղական երաժշտության վրա, ըուն հայկական ոճի գիտական եիմնավորումները՝ զուգորդված օրինակների երգեցողությամբ։ Բանախոսությանը ներկա էին եղել և հայտնի ֆրանսիացի երաժիշտներ։ Ան եղավ հայ ազգը իր մշակույթով համաշխարհային թատերարենի վրա արժանի ձևով ցուցադրելու կարևոր փորձերից մեկը. «...Մեր ազգին վարկի

13. Иностранная литература, Москва, 1963, 3, стр. 223.

14. Դրանք էին «Միփանա քաջեր», «Ալուզյազ սարն անպել ա», «Մեր դրանը», «Քայլերգ և սայլերգ», «Հայր մեր», «Հիշեցույթ», «Մեռա բազում բանելեն», «Միրամի ծառ», «Իմ շինարի յարը», «Գարուն ա, ձուն ա արել», «Շողեր ջան», «Լուսնակն անուշ», «Քեղեր ցուլեր», «Մարերի վրով գնաց», «Էս գիշեր», «Լուովա գութաներգ», «Չիզ աու, քաշի», «Նորեմբուր խորին», «Ով գարնանալի», «Այսօր ձայնն հարական»։

15. Մ. Բարսյան, ֆ. 127, Չարենցի անվան զբոսկանության և ավեսաի թանգարան։

16. Ա. Չուպանյան, Նվագահանդես Փարիզի մեջ, Անահիտ, 1906, դեկտեմբեր, էջ 240։

17. Նույն տեղում։

18. Ա. Չուպանյան, Կոմիտաս վարդապետը և հայ երաժշտությունը, Անահիտ, 1931, էջ 112։

համար ի՞նչ արժեք ուներ Կոմիտասի ներկայությունը Փարիզի մեջ, թե Փարիզի Հայկական Միության նախածեղծներն էին, եւ օգնությանը Կոմիտասի առած մեծ նամերը ինչքա՞ն խոր սքանչացում պատճառեց Փարիզի ֆրանսիական երաժշտասեր եասարակության և ինչպիսի ուղախություն և եսրսրություն եայ գաղութին»¹⁹:

Չնայած այս համերգների սոս արձագանքին, 1913 թ. Փարիզում հրատարակված Լավինյակի եանրագիտաբանում եայ երաժշտությունը լուսյան մասնվեց: Դա առիթ դարձավ եայկական մամուլի էջերում բուռն բանավեճերի, թե՛ «եայն ունի՞ արդյոք ինքնուրույն երաժշտություն»: Որպես պասասխան, Կոմիտասը «Ազատամարտ» թերթում (1913 թ. N 1316) եանդես եկավ «Հայն ունի ինքնուրույն երաժշտություն» եողվածով, իսկ 1914 թ. նա մասնակցեց Փարիզում կայացող միջազգային երաժշտական ընկերության եերթական 5-րդ կոնգրեսին: Կոնգրեսի գումարման առիթվ Կոմիտասը Հայոց եկեղեցում դեկավաբեց իր մշակած պատաբագը, որին ներկս էին եամաժողովի անդամները²⁰: Համաժողովին Կոմիտասը կարդաց «Հայ ժողովրդական երաժշտությունը» և «Հայ հողեր երաժշտության եին և նոր նոտագրութրսն մասին» գեկուցումները, ինչպես նաև կոնգրեսի մասնակիցների խնդրանքով ևս սր գեկուցում «Հայ երաժշտության ժամանակի, կշռի, շեշտավորության և աաղաչախության մասին»:

Կոմիտասի եամերգներն ու բանախոսությունները եայ-ֆրանսիական երաժշտական կապերում իրենց կենտունակությունը պաեեցին և եեասագ տարիների ընթացքում: 1932 թվին Փարիզի Հայկական ուսումնական միությունում Ա. Գաստուեի կարդացած «Հայկական երաժշտական արվեստի պատմության մասին» դեկուցման մեջ ասվում է. «Լա, որ հոգով-մարմնով նվիրվել էր եայոց ողջ երաժշտական ժառանգության լիակատար ձայնագրմանը, գոե է, ավա՞ր, վորջրս պաաերագմի ընթացքում իր կրած գթկանքների»²¹:

Վարդապետը իր վշտալի վախճանի նախուրյակին վերջին եանգրվանը գաավ Փարիզում (1919-35 թ.թ.), անգամ դրանով իսկ որոշակի ազդեցություն բողներով գաղթօջախի երաժշտական-մշակութային կյանքի վրա: Կոմիտասյան եանճ նաժողովի ջանքերով անցկացվող եոբեյանական եամերգները²², եայ երաժշտությունը նվիրված դասախոսությունները, ամսագրերում Կոմիտասի գործունեությունը լուսարունող եողվածները²³, սաեղձագործությունների ապագրումը և այլն, շարունակեցին Վարդապետի օրոք ձևավորված եայ-ֆրանսիական երաժշտական կապերը:

КОМИТАС: И ФРАНЦИЯ

Резюме

Н. Егоян

В начале 20-го века музыкальный мир Парижа был под влиянием музыки Клода Дебюсси. Визиты Комитаса в Париж и это новое течение не могло не повлиять на формирование его эстетических взглядов, мировоззрение и музыкальное мышление.

В 1906 г. в Париже был опубликован его сборник из 12-и народных песен "Ай кнар", а также несколько научно-исследовательских статей.

Присутствие Комитаса и его творческая, исполнительская деятельность имели свое влияние и на французских музыкантов и на местную армянскую общину. Важно участие Комитаса в V-ом конгрессе международного музыкального содружества народной музыки.

19. Ա. Չոպանյան, Կոմիտասի վարդապետը և եայ ժողովրդական երաժշտությունը, Անահիտ, 1931:

20. Ֆրանսահայ տարեգիրք, 1926:

21. Ամեդե Գաստուե, Կոմիտասական, 2, 1981, էջ 261:

22. 1950 թ., գարնանը կայացած՝ 80-ամյակին նվիրված եամերգը Սորթոնի մեծ համերգասրահում, 1969 թ., աշնանը կայացած՝ 100-ամյակին նվիրված երգահանդեսը Սան Օսաաձ եկեղեցում և այլն:

23. Նշենք 1939 թ. Կոմիտասի 60-ամյակին նվիրված Ռ-րեն Լընոբմանի ընդարձակ եողվածը "Le Mond Musical"-ում, որը բարգմանարար երատարակվել է «Անահիտ»-ում, 1936 թ. ապրիլի 27-ին Փարիզի ռադիոյով Ա. Գաստուեի գրույցը՝ տպված «Կոմիտասականի» 2-րդ գրքում: